«ՍԵԳ» ՍՊԸ-ին,

«ԴԻ ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին,

Ա/Ձ Արտյոմ Սահակյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ձեր կողմից հայտերով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանության գնահատման արդյունքում արձանագրել է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, դրանք են.

1.«ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մակնիշները նշված չեն կամ ճիշտ չեն նշված: 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար (նաև տեխնիկական բնութագրերում) նշվել են մեկից ավելի ֆիրմային և արտադրողների անվանումներ, ապրանքային նշաններ և մակնիշներ:

Վերը նշված անհամապատասխանությունները շտկելու համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը պետք է ներկայացվեն հստակ՝ նշելով կոնկրետ մակնիշները և տեխնիկական բնութագրերը:

2. Ա/Ձ Արտյոմ Սահակյանի կողմից առաջարկված 6-րդ և 7-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը թերի են լրացված, իսկ մակնիշները ճիշտ չեն նշված: Նշված արտադրողները չունեն այդպիսի մակնիշի ապրանքներ:

Վերը նշված անհամապատասխանությունները շտկելու համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը պետք է ներկայացվեն ամբողջական՝ նշելով ճիշտ մակնիշները և ամբողջական տեխնիկական բնութագրերը:

3. «ԴԻ ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մակնիշները նշված չեն կամ ճիշտ չեն նշված, իսկ 4-րդ չափաբաժնի «արտադրողի անվանումը» սյունակում նշված է «Verbatim», սակայն տեխնիկական բնութագրում նշված են այլ արտադրողների անվանումներ:

Վերը նշված անհամապատասխանությունները շտկելու համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը պետք է ներկայացվեն հստակ՝ նշելով ճիշտ մակնիշները և ամբողջական տեխնիկական բնութագրերը:

ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է:

Առաջարկում ենք մինչև ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի քարտուղար՝

KHACHATRYAN HAYK 3510780515

Digitally signed by KHACHATRYAN HAYK 3510780515
Date: 2023.03.13 15:39:11 +04'00'

Հայկ Խաչատրյան